ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 2-ի հերթական նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 2-ի հերթական նիստի օրակարգ մասին:

/զեկուցող Գ. Մովսիսյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/զեկուցող՝ Վ. Միրզախանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի ''Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին'' թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/զեկուցող՝ Վ. Միրզախանյան/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի ամսեկան վարձատրության չափը սահմանելու մասին:

/ զեկուցող Հ. Միրզախանյան/

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/ Հ. Միրզախանյան/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ''Մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ի փակման հարցը:

/Վ. Միրզախանյան/

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի համայնքապետարանի աշխատակազմի և ''Մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/զեկուցող՝ Վ. Միրզախանյան/

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) առաջին էջի վերևի աջ անկյունում նշված «ՆԱԽԱԳԻԾ 21» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՆԱԽԱԳԻԾ» բառով:

2. Նախագծի անվանումն անհրաժեշտ է խմբագրել՝ նշելով ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ակտի վերնագիրը, ակտի բնույթը և տեսակը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:

Միաժամանակ նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել «/Ձեկ.ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ» բառերը:

3. Նախագծի նախաբանում «ՈՐՈՇՈՒՄ Է՝» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «Համայնքի ավագանին» բառերը:

4. Նախագծի 1-ին կետից անհրաժեշտ է հանել «համար» բառը՝ նկատի ունենալով Նախագծի և Հավելվածի վերնագրերը:

5. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետի 2-րդ ենթակետի գ/ պարբերությունում «սույն օրենքի իմաստով» բառերի փոխարեն անհրաժեշտ է նշել այն օրենքի անվանումը, որին հղում է կատարվում:

6. Հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները, որոնց համաձայն ծխախոտային արտադրատեսակներից բացի տեղական տուրք է սահմանվում նաև **ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության** համար:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 22Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով.

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0.5 գործակիցը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի
N22-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. ***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում սահմանվում են տեղական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝***

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության մասին օրենքով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի,

մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների , (կամ) ծխախոտի նաև ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ.

18) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազարից մինչև երեք հարյուր հազար դրամ.

19) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազարից մինչև քսան հազար ՀՀ դրամ.

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամ:

II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին

սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝

ա. բնակելի նշանակության շենքերում կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հիսուն դրամ,

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանությոան վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝

- առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ,

- հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քառասուն դրամ,

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասը դրամ,

- կրթական, մշակութայի, առողջապահական, սպորտային գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ,

գ. ոչ կենցաղային աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝

ա.համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝ վեց հազար դրամ

բ. այլ համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝ վեց հազար դրամ

գ.նպաստառու, միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամության կարգ ունեցող, մանկապարտեզ հաճախող երկուսից ավել երեխա ունեցող ընտանիքների համար՝ երեք հազար դրամ,

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

11) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

12) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար.

13) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով՝ 72760 դրամ

	Անասնաբուժականծառայությանանվանումը	Գինը /դրամ/
1		
2	Ծննդօգնություն 1. թեթևմիջամտություն 2. ծանրմիջամտություն	**1000** **2000**
3		
4	Կենդանիների արտաքին ներքին մակաբույծների դեմ պայքար	**500**
5	Ախտահանություն	1 քառ. մետր **100**
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր **100**
7	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելություն **1000**
8	Արհեստական սերմնավորում	**2000**
9		
10	Կենդանիների նախասպանդային զննում՝կախված կենդանու տեսակից	Մանր կենդանի **1000** Խոշորկենդանի **2000** :

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ***Գ. ՄՈՎՍԻՍՅԱՆ***

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) առաջին էջի վերևի աջ անկյունում նշված «ՆԱԽԱԳԻԾ 22» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՆԱԽԱԳԻԾ» բառով:

2. Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոնց համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող կամ գործողությունը դադարեցվող իրավական ակտի՝ սույն օրենքի սահմանված **կրճատ անվանումը**:»:

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների:

3.Նախագծի անվանումն անհրաժեշտ է խմբագրել՝ նշելով ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ակտի վերնագիրը, ակտի բնույթը և տեսակը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:

Միաժամանակ նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել «/Զեկ.ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ» բառերը:

4. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին:

5. Նախագծի 1-ին կետում «փոփոխությունները» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություններ» բառով:

6. Նախագծի Հավելվածի գլխագրում «Հավելված 1» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հավելված» բառով՝ նկատի ունենալով Նախագծի 1-ին կետի դրույթները:

7, Նախագծի Հավելվածի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԻԾ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերով և նշել ավագանու թիվ 45-Ն որոշման ընդունման ամսաթիվը:

8. Հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այդ առումով նախագծի բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ սահմանող դրույթներն անհրաժեշտ է հանել և նախատեսել հավելվածներում:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 23Ն

,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ,, ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, ''Նորմատիվ իրավական ակտերի'' Հայաստանի Հանրապետության 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Արդարադատության նախարարության կողմից ուղարկված 30.11.2020 թվականի պետական փորձագիտական եզրակացությունը.

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայսատանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի ''Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին'' թիվ 43-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԱՍՈՂԻԿ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի
N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ

,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ,, ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Բաժին 04 խումբ 5 դաս 1 4251 հոդվածից 850.0 /ութ հարյուր հիսուն հազար / դրամ տեղափոխել պահուստային ֆոնդ 4891 հոդվածին:
2. Պահուստային ֆոնդից 4891 հոդվածից 2 850.0 /երկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար տեղափոխել ֆոնդային բյուջե:
3. 2 600.0 /երկու միլիոն վեց հարյուր հազար/ դրամ գումար տրամադրել բաժին 04 խումբ 3 դաս 6 5129 հոդվածին:
4. 250.0 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ գումար տրամադրել բաժին 04 խումբ 3 դաս 2 5112 հոդվածին:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 24Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՍԵԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի 2021 թվականի ամսեկան վարձատրության չափը սահմանել 270 000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Արտիմետ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 26

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ''ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ'' ՀՈԱԿ-Ը ՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 15-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաշվի առնելով բնակլիմայական պայմանները և կորոնավիրուսային հիվանդության ծանր զարգացումները 2020 թվականի դեկտեմբերի 15-ից փակել Արտիմետ համայնքի ''Մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 27Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ''ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ'' ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի համայնքապետարանի աշխատակազմի և ''Մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1 և 2 -ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի
N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

h/h	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2021թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Համայնքի ղեկավար		1	270,0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	200,0
3	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	210,0
4	Առաջատար մասնագետ	3.1-1	1	190,0
5	Առաջատար մասնագետ	3.1-2	1	190,0
6	1-ին կարգի մասնագետ	3.2-1	1	163,0
7	2-րդ կարգի մասնագետ	3.3-1	1	155,0
8	Օպերատոր		1	144,0
9	Հուշարձանի պահակ		1	120,0
10	Վարորդ		1	152,0
11	Հավաքարար		1	98,0
12	Օժանդակ բանվոր		1	152,0
13	Էլեկտրիկ		1	98.0
	Ընդամենը		13	2162,0

ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

h/h	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2021թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Գրադարանի վարիչ		1	114,0
	Ընդամենը		1	114,0

h/h	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2021թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Անասնաբույժ		0.5	92.618
	Ընդամենը		0.5	92.618

Աշխատակազմի քարտուղար Գ. Մովսիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի
N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

h/h	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2020թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Մանկապարտեզի տնօրեն		1	130,0
2	մեթոդիստ ուս. գծով		0,25	110,0
3	հաշվապահ		0,5	92.618
4	Դաստիարակ		1.12	110,0
5	Դաստիարակ		1.12	110,0
6	օտար լեզվի դաստիարակ		0,5	110,0
7	Դաստիարակի օգնական		1	92.618
8	Դաստիարակի օգնական		1	92.618
9	Դաշնակահար		0,5	110.0
10	խոհարարի օգնական		0,5	92.618
11	Խոհարար		1	92.618
12	տնտեսվար		0,5	92.618
13	պահակ		1	92.618
14	պահակ		1	92.618
15	բուժքույր		0,5	92.618
16	հավաքարար		0.5	92.618
17	օժանդակ բանվոր		0.5	92.618
	Ընդամենը		12.49	1698.7

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մովսիսյան